# ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

Սովետական գրականությունը, հայ ժողովուրդը մեծ կորուստ կրեցին։ Վախճանվեց մեր ժամանակի խոշորագույն գրողներից մեկը, հայ արձակի մեծ վարպետ Ստեփան Զորյանը։

Ստեփան Զորյանը ծնվել է Ղարաքիլիսայում (այժմ Կիրովական քաղաք), 1889 թ., գյուղացու նահապետական ընտանիքում։ Հայկական դպրոցների փակման հետևանքով սովորել է ընդմիջումներով՝ իր ծննդավայրում, ապա Թիֆլիսում։ Ապրել է Թիֆլիսում, ապա 1919 թ. Երևանում։ Մանուկ հասակից հրապուրվել է գրքերի կախարդական աշխարհով։

Զորյանի ստեղծագործական նկարագրի համար բնորոշ է, որ նա սկսելով տպագրվել 1909 թ., սկզբից եթե ամուր կանգնեց ռեալիստական ուղու վրա։ Նրան ներշնչել են Թումանյանը, ռուս մեծ գրողներից Տոլստոյը և Չեխովը։

Ութսունին մոտենում էր Ստեփան Զորյանը, բայց կեցվածքի մեջ կորություն չկար։ Կնճիռներ կային նրա դեմքին, բայց դա ծերունու կնճիռներ չէին, այլ ապրած ու մտածող մարդու։ Ալեհեր էր. դա առավել հմայիչ էր դարձնում նրան։

Եվ իսկապես։ Զորյանը գեղեցիկ մարդ էր. բայց ոչ միայն արտաքինով, այլև ներքինով։ Լինելով մեծ տաղանդի տեր, նա համեստ էր. թշնամի ամեն մի ցուցադրության։ Նա ազնիվ էր. ոչ մի շինծու խոսք չէր ասի նա, ոչ մի շինծու խոսք չես գտնի նրա գործերում, Անկրկնելի էր՝ համառորեն, անկոտրում, վերին աստիճանի խստապահանջ արվեստի ասպարեզում։

Զորյանը ուներ մեծ փորձ ու ճանաչողություն. մարդու հոգեկան աշխարհի խորքերը ներթափանցելու փայլուն ունակություն։ Բնավորությամբ հանգիստ՝ նրան մատչելի էր մարդկային բարդ աշխարհի թե՛ անդորրը և թե՛ փոթորիկը կերպավորելու հատկությունը։ Հայ ժողովրդին քաջ գիտեր։ Հասարակ մարդու, լինի տղամարդ թե կին, նրա ստեղծած պատկերները մեր մշակույթի ճշմարիտ և մնայուն էջերից են։

Զորյանի ստեղծագործությունը լի է հավատով դեպի մարդը։ Նա գիտեր, որ մարդը կարող է նորոգվել, վերափոխվել։ Հեղափոխությունը առավել խորացրեց նրա այդ համոզմունքը։

Հավատ իր ժողովրդի կենսունակությանը, հավատ մարդու վերաստեղծմանը, մարդասիրություն՝ Զորյանի ստեղծագործության մեջ դրանք միասնություն են կազմում։

Զորյանի հեքիաթներում ազնությունը պատժվում է, արդարությունը հաղթանակում. Հազարան բլբուլը ծաղկեցնում է չորացած այգիները... հաղթանակում է սերը։

Զորյանի գրիչը բազմերանգ էր ու բեղուն, Նա լավ գիտեր ու սիրում էր ոչ միայն հայ, այլև ռուս և արևմտաեվրոպական գրականությունները, Թումանյան — Պուշկին — Անատոլ Ֆրանս — Ռիզամի — Տագոր և շատ ու շատ ուրիշներ



Զորյանը խոր գեղարվեստականությամբ տվել է պատկերներ նաև այլ ժողովուրդների կյանքից։ Հիշենք նրա հոռմեական պատմվածքները, Ալու և Կաթր Ահմեդի կերպարները, լեհ հայրենասերի, ծերունի պան Պրժևիցկու նկարագիրը։

Հիսունից ավելի տարիների ընթացքում Զորյանը եղել է հայ ժողովրդի տարեգիրը՝ սկսած առաջին համաշխարհային պատերազմից մինչև մեր օրերը։

Զորյանի ստեղծագործական կյանքի վերջին հորձանքն էր արյունով և տխրություններով լի IV դարի վերապատկերումը։ «Պապ թագավոր», «Հայոց բերդը» և «Վարազդատ» եռագրությունը խոշոր երևույթ է մեր գրականության մեջ։ Զորյանի սևեռուն մտածումն էր իր ժողովրդի ճակատագրի խնդիրը։ Հայ ժողովրդի բարոյական բարձրության, անարդարության դեմ ցասկոտ բողոքելու ունակության, նրա ճկուն մաքի ու կենսասիրության մեծարումով Զորյանը ասում էր, թե նա ի վիճակի է կարգավորելու իր կյանքը. ստեղծելու պատմական առաջխաղացման բոլոր նախադրյալները։ Ու եթե «Պապ թագավորը» ու «Հայոց բերդը» արյունով և ավերով են վերջանում, ապա «Վարազդատ»-ում Զորյանը տալիս է իր վերջին պատգամը հաղթական

ժողովրդին. պահպանի՛ր քո ինքնությունը, պահպանի՛ր քո լեզուն։

Լինելով խոշոր գրող, Զորյանը միաժամանակ ակտիվորեն մասնակցում էր հասարակական կյանքին։ Նա ընտրվել է ՀՍՍՀ և մի քանի նվագ ՍՍՀՄ Գերագույն սովետների դեպուտատ։ Սովետական իշխանությունը բարձր է գնահատել Զորյանի գրական-հասարակական աշխատանքը և պարգևատրել նրան Լենինի, Աշխատանքային Կարմիր դրոշի և Պատվո նշան շքանշաններով և մեդալներով։

Ստեփան Զորյանը Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ էր, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր գրականության և արվեստի պետական մրցանակների հանձնաժողովի նախագահ։

Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՍԱԿՈՎ

Ս. թ. հոկտեմբերի 11-ին 74 տարեկան հասակում, երկարատև ու ծանր հիվանդությունից հետո Մոսկվայում վախճանվեց նավատորմի ծովակալ Հովհաննես Ստեփանի Իսակովը։



Տաղանդավոր ծովագնացի և մեծ գիտնականի անունը վերջին տասնամյակներում մեր հայրենիքում և նրանից դուրս մեծ համբավ էր վայելում։ Սովետական ռազմական կադրերի և առաջին հերթին ծովայինների շրջանում Հովհաննես Իսակովը բարձր հեղինակություններից մեկն էր։ Նա այն բացառիկ դեմքերից էր, որ իր մեջ փայլուն կերպով մարմնավորում էր ռազմական կազմակերպչական բարձր ձիրքն ու տաղանդը խորը տեսական գիտելիքների հետ։

Նավատորմի ծովակալ Իսակովն անցել է կյանքի մեծ, ուսանելի և փառահեղ ուղի։ Նա ծնվել է 1894 թ. օգոստոսի 22-ին Ղարսի շրջանի Հաջիքենդ գյուղում, երկաթուղային տեխնիկի ընտանիքում։ 1913 թ. Իսակովը փայլուն գնահատականներով ավարտում է Թիֆլիսի ռեալական ուսումնարանը և ջերմ ցանկություն ցուցաբերում սովորելու ծովային ուսումնական հաստատություններում։ Նրա հայ լինելն ու սոցիալական դրությունը արգելակում էին սպայական դպրոց ընդունվելուն, սակայն Իսակովի համառ կամքն ու հետևողականությունը հաղթահարում են բոլոր արգելքները։ Շուտով նա աշխատանքի է անցնում «Իզյասլավ» գծանավի վրա, սկզբում որպես սևագործ աշխատող, իսկ երեք տարուց հետո նա միջմանի աստիճան ուներ և մասնակցում էր գերմանական նավատորմի դեմ մղվող պայքարին Բալթիկ ծովում (1916 թ.)։

Իսակովը իր հիանալի ընդունակությունները կարողանում է դրսևորել միայն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո։

1917—1920 թթ. Իսակովը ծառայում է Բալթյան նավատորմում, սկզբում որպես գծանավի հրամանատարի օգնական, իսկ հետո՝ հրամանատար։ Նա ակտիվ կերպով մասնակցում է քաղաքացիական պատերազմներին։ 1920—1926 թթ. նա նորից իր սիրած Բալթյան նավատորմում է, բարձր կարգի ռազմանավերի հրամանատարի պաշտոնում։

Հաշվի առնելով երիտասարդ ծովայինի անբասիր ծառայությունն ու բարձր պատրաստականությունը, ռազմածովային գործերի կոմիսարիատը 1926 թ. Իսակովին նշանակում է Սևծովյան նավատորմի շտաբի օպերատիվ բաժնի պետ, ուր նա ծառայում է 3 տարի։

Բացառիկ ընդունակություններն ու արտակարգ աշխատասիրությունը Իսակովին արագորեն առաջ են մղում դեպի ծառայության ավելի դժվարին և պատասխանատու բնագավառներ, 1929 թ. նա գերազանց գնահատականներով ավարտում է ռազմածովային ակադեմիայի բարձրագույն կուրսերը և 33 տարեկան հասակում նշանակվում բանվորա-գյուղացիական կարմիր բանակի